

6. ՈՂԲ ՎԱՍՆ ԱՌՄԱՆՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ի հոլոպել ժամանակին,
Եւ մերձեցալ ատուրց վերջին,
Յորում սպառաւ փոքր այն քարին,
Զոր առաջինքն գործեցին,

Նուազեցաւ Հոռմայեցին,
Եւ զօրացաւ Հագարացին,
Քաղդէացին և Քետացին
Եւ բուն ծառայն Քանանացին:

Գեղօք և քաղաք յուովք առին,
Քրիստոնէից շատ տիրեցին,
Զաւերս նոցա զօրս արարին՝
Ճառել չկարէ ոք երկրաձին:

Ի տիրութեան Տանկաստանին,
Յատուրս պղծոյն Սալահադնին,
Զօր գումարեալ չու արարին,
Ի սուրբ քաղաքըն դիմեցին:

Բանակ անեալ զՅորդանանաւ
Եւ բազմութեամբ զդաշտըն լցին,
Թուղթ արձակեալ առ ֆրէրին՝
Յերուսաղէմ սուրբ քաղաքին.

«Եկայք ի մեր հնազանդութիւն
Ծառայապէս ներքոյ ձեռին
Եւ կամ ելեք պատերազմաւ,
Ըստ օրինի քաջամարտին»:

Ֆրէրք եկեալ խորհոթող առին
Զեռն տալով յոյսըն վերին,
Հոռմայական մեծ հրամանաւ
Խստի ետուն զպատասխանին:

«Թէ մեք կուիլ ունիմք ընդ ձեզ
Եւ հալածել յանվայր վայրին
Կամ թէ և մահ հասանիցի
Ի սէր դդուս սուրբ քաղաքին»:

Ամէնքն ի լաց 'ւ ի յողբ մտին,
Յեկեղեցիս դիմեալ գնացին.
Զայնք օրհնութեանց բազմանային,
Եւ պաղատանք յերկարէին:

Մշտամոռունչ աղօթէին
Եւ հանապազ հեծեծէին,
Պատրիարգունք և քահանայք
Պատարագաւն հայցէին՝

Թէ «Օգնութիւն մեզ ի տեսունէ
Եկեալ հասցէ որպէս նախկին.
Սակաւաձեռն այսու արամբք
Յաղթեմք զօրաց մեժ ընազմին»:

ԶՌահ բրինձն գլուխ եղին
Զօրուն փոքու ի հանդիսին,
Ութհարիր երիվարաւ
Եւ նոյն չափով հետևակին:

Հաղորդեցան մարմնոյ փրկչին
Եւ սուրբ խաչին երկիր պագին,
Զտէրունական խաչն հանին
Եւ առաջի անկանէին:

Զտիւն և գիշերն ի յողբ կացին,
Մինչ արտասուօք զհողն թացին:
Զեղև նշան սուրբ նախկին
'Ի ոչ պատասխան ողբոց նոցին:

Յորժամ ի թուրքն դիմեցին
Խաչն յաջմէ կանգնէր նոցին.
Թէպէտ և յոյժ սուգ արարին,
Ոչ շարժեցաւ բնաւ տեղին:

Պատրիարգաց յուշ առնէին
Եւ իմաստնոց հարցանէին,
Ոչ կարէին պատասխանել,
Զի հասեալ կայր վճար վերջին:

ԶՏրապօլսոյ կոմսիս հարցին.
Այն նենգաւոր խէթ աղուեսին,
Իսկ նա մեկնեալ էր սուրբ յուխտէն
Եւ դաշնադիր էր ներհակին:

Որպէս Վասակ՝ հայոց ազգին
Եղև մատնիչ սուրբ իշխանին,
Սոյնպէս և սա՝ Ռահ բրնձին
Եւ միամիտ զօրաց նորին:

Թուղթ առաքէր Սալահադնին,
Զինքըն ծառայ գրէր նմին
Եւ նշան տայր զքղանց դրօշին՝
Զզարդըս նոցա առնել դեղին:

Ասէր. «Բաժնեմ զզօրն ֆռանգին,
Եւ զքաջքն առնում ի յիմ մասին,
Գամ, իջանեմ ի վերայ ջրին,
Զնոսա պահեմ ի յերաշտին»:

Եւ նա արար, զոր խորհեցաւ
Ընդ մտերիմ զօրականին.
«Պահէք,— ասէ,— զաջոյ դեհին,
Եւ ես պահեմ զմուտ ջրմղին»:

Յանկարծակի մէջ գիշերին
Այն թշնամեաց գունդն հասին,
Բանակ առին ի վերայ ջրին,
Ըստ խրատու այն պիղծ կոմսին:

Անդ լուսանալ առաւօտին,
Մուտս ուզմի յօրինէին.

Տեղի ետունն նենգատրին,
Ըստ նշանի դրոշից նորին:

Գազանաբար յարձակէին
Վերայ զօրաց քրիստոնէին,
Իսկ նոքա ոչ թուլանային,
Այլ քաջութեամբ խիզախէին:

Ուժգին բախմամբ հարկանէին
Զմոխրատեսակ կեդարացին,
Մինչ անկելոցն ի հանդիսին
Դիաթաւալ խիտ խաղային:

Զատուրս երիս անդ յամէին
Արիական զօրք Ֆռանգին:
Այլ՝ էր ի տօթ ժամանակին՝
Վարդավառի շորեքշաբթին,

Յորում քարինք շողանային,
Եւ կրականայր փոշի երկրին:
Սաղաւարտիք և զրահիք
Պարաւանդեալ անդամք նոցին:

Ի սաստկանալ տօթոյ ջերմին՝
Վառեալքն երկաթսն ալրէին
Եւ յանջրդոջ տօթոյ տապին
Յոյժ ծարաւեալ պապակէին:

Քաջամարտիկքն թառամէին
Եւ ի ներքուստ ցամաքէին,
Մինչ թալկեալ ամէննին
Եւ ի յուժոյ թողել բնաւին:

Ապա զիշխանն և զիր որդին
Կալեալ ածին ի յատենին.
Հարցափորձեալ նենգաւորին
Ի յուրացութիւն որսայր զնոսին.

«Թքել,— ասաց,— ընդդէմ խաչին
Եւ հաւանիլ փեղամբարին»:
Չհանդուրժեալ նահատակին՝
Քրիստոսաւէր թագաւորին,

Թուք արձակեաց յերես պղծին
Յանպատուութիւն կունդ Մահմետին:
Ի կատաղել Սալահադնին՝
Զնոսա որպէս զոշխար զենին,

Զպատրիարգունքն և զՖրէրնին
Սրով իսպառ կոտորեցին:
Զխաչն ի յոտից արկին,
Զոր սերովքէքն սարսէին:

Եւ զմնացեալ զօրականին
Ճորտ և ծառայս գրաւէին,
Ի ծախս արկեալ վաճառէին,
Ընդ Ասիալանս յուղարկէին:

Ի սուրբ քաղաքն դիմեցին,
Զօրօք պատեալ պաշարէին,
Ի սուրբ խաչի մեծ ուրբաթին,
Ի վեց ժամու մէջօրէին:

Խաւար կալաւ զամենեսին,
Հանց որ աստեղք երևէին,

Պայծառ արևն ի սուգ եմուտ,
Առ կորստեան քրիստոնէին:

Յառ և յաւար սուրբ քաղաքին,
Զոր պղծալիցքն կոխէին,
Եւ ուր սրովքէք թեաքօղին,
Յոյժ անարժանքն այսպանէին:

Զնշանք խաչացն զոր գտին,
Ոտից կոխան զայն առնէին.
Զկուսան կանայք հաւատորին
Եւ զտղահասակ մանկտին՝

Գերի առեալ ժողովէին
Եւ յընտրութիւն պարապէին,
Իրաքանչիւր բաժանէին
'Ի ի Բաբելոն յուղարկէին:

Եւ Յարութիւն մտեալ փրկչին
Գերեզմանան շրջան առին,
Զսպասատրքն սուրբ տեղեացն
Անդէն զենեալ փողոտեցին:

Ի տանարի տեառն մտին,
Ի սրահին Սողոմոնին,
Զատակս տանն, այլն զորմունս
Քրիստոնէից արեամբ լուացին:

Այլն կարգեաց իւրոյ ազգին
Զմտանել անդ քրիստոնին
Եւ կայ մնայ կտակ պղծին
Մինչև ցայսօր ժամանակին:

Զսուրբ Սիոնն ու զԾնունդն
Եւ զամենայն ուխտատեղին
Նախատանօք այսպանէին
Եւ գարշ ոտիւքն կոխէին:

Զօրհներգութիւնք մարգարէից,
Զոր սուրբ հոգին առթեր նոցին
Եւ զկտակարանս առաքելոց
Տնօրէնութեանցն պատմողին

Խափանեցին, լռեցուցին,
Զի կարգեցցեն զխաբէքային,
Զմսհաւ Ղուրանն ընդ Ֆրղանին
Զեքքար ալլահն անդ ճշէին:

Զզարդ և զսպասք սուրբ տանարաց
Պեղծ մզքթացն ձօնէին
Եւ զհանդերձանք պատմունանին
Կալեալ յինքեանս բաժանէին:

Ի բարձրութիւն ելեալ բեմքին՝
Զձև մէհրապին նկարէին
Եւ առաջի անկեալ նմին
Յիրեանց բախտէն գոհանային:

Զայս ձայն գուժի աղաղակաւ
Ի Հոռմ քաղաքն հասուցին.
Պապըն լուեալ ի խոր խոցէր
Եւ ամենայն սեպուիք նորին:

Իշխանք 'ի ազատք ժողովէին՝
Հոռմայեցոց պայազատին,
Սպանիացին և Փարէզին,
Ալամանիկն և Վէնէսին:

Ժողով անեալ քանակէին
Եւ բօթատու միմեանց լինին,
Թէ «Պարծանաց մերոյ տեղին
Եւ ոտնակոխ կենարարին,

Կոխան եղև անարժանից
Մահմետական չար ժողովին»:
Վասն այն ի սուք անհնարին
Եւ ոտնակոխ կենարարին,

Կոծով հարեալք լինէին
Յեկեղեցիս և առոնին,
Ասադական ձայնի լային,
Հեծեծանօք հառաչէին:

Զգարդ հանդերձից իշխանական
Փութով ի սեալ փոխարկէին,
Առ փողոցեալս թալալէին
Եւ ընդ ցանկի տապալէին:

Ապա խորհուրդ ի մէջ անեալ՝
Ելանելոյ ընդդէմ տանկին,
Զեռն ի գործի արկանէին
Եւ լաստափայտս որոնէին:

Նաւս բազումս կազմեցին
Եւ մարտակառս յօրինեցին:
Ծոխ թագաւորն Ալամանին
Հարեալ յաղէտ կսկծագին,

Ասէ. «Գնացուք, հալածեացուք
Զթշնամիս սրբոյ խաչին,
Այլ թէ և մահ պատահեացէ,
Ոսկերքս անկցին ի սուրբ երկրին»:

Զու արարեալ վերայ ծովին,
Ուղևորեալ կապոյտ դաշտին,
Մի զմիով արշաւէին
Եւ խրախուսեալ խիզախէին,

Թէ. «Մարտիցուք մեր տիրապէս
Զանուն մարտիրոսին
Եւ թէ յաղթեմք զթշնամին
Վրիժառու սրբոյ խաչին,

Մեծն Պետրոս ընդ մեզ գայցէ,
Զունկն կտրել զՄաղքոսին,
Որում յանձնեաց հօր սիրելին
Զսուրբ գառինս իւրոյ հօտին»:

Այլ բանասարկու շար թշնամին
Նախանձ հարեալ զչունականին,
Զգայնագեղ ճանապարհին,
Կալեալ ուժով բռնանային,

Մինչև ի սուր արկեալ զնոսին
Եւ զապատամբքն ի սպառ քարձին
Ապա յաջող նաւարկութեամբ
Ի Տրապօլիս եզերեցին:

Այն նախանձոտ աղետն հին
Կնճիռ լինէր գործոյն կրկին,
Մինչև երդմամբ մեծ ուխտեցին
Չառնել վնաս երբեք նմին,

Թէ օգնական լինի գործոյն
Եւ հնարէ զմոտ ռազմին,
Եւ նա ուխտեաց թագաւորին
Ծառայ լինել յաւետ նմին:

Եւ առաջնորդ յերբ խնդրեցին,
Չտուկն ետոր զաման չարին,
Այլ պատուիրեալ էր նա նմին
Տանիլ և տալ ի սուր տանկին:

Յերբ որ հասան ի Տանկաստան
Անապարեալ եղև տուկին.

Ղօղեալ թաքուն ի յիր տեղին,
Առ նենգաւոր խաբող կոմսին:

Տարակուսեալ զօրականին
Չաւորս քսան յանջոր դաշտին
Եւ առ սովին և ծարաւին
Վերայ տանկին արշաւեցին:

Անցեալ հասին յերկիր Ունին,
Անթի հեծեալք ընդդէմ ելին.
Շրջան առեալ յարձակէին
Որպէս զգայլ ի վերայ գառին:

Այլ թագաւորքն և զօրք նորին
Կական բարձեալ ի ձայն ուժգին,
«Աստուա՛ծ, յօգնել մեզ փութացիր
Եւ յընկրկել քում ծառային»:

Ապա ի մարտ մտեալ յուսով,
Վանեալ հարին հալածեցին.
Երկու մարտիկ ի մէջ գնդին
Զարմանալոյ գործ գործեցին:

Իբրև զհուր ընդ եղեգին՝
Հատեալ զոսկմն անցանէին,
Գոռային, խիզախէին,
Բազումք յահէ սատակէին:

Իրաքանչիւր հազար սպանին
Այլև զբիրս փախուցին.
Սուլտանն երդուաւ ընդ Ֆռանգին
Հնազանդիլ Հոռմայ գահին:

Ապա դարձան ի Մէջերկրայս
Առ Լսոնաւ թագաւորին,
Անտի դարձան յԱնտիոքին,
Առ Զհանայ գետովն իջին:

Ի յողորհի մտեալ արքայն
Եւ մեռանէր ազդմամբ շարին.
Զորդին ի տեղն կարգեցին
Եւ թագաւոր հաստատեցին:

ՅԱքայիու վերայ եկին,
Պատնէջ կանգնեալ պաշարեցին,
Եւ անտանօր արքայորդոյն
Օրհաս մահու հասանէին:

Թէպէտ և ջերմ էր սէր նոցին,
Այլ մեղքն մեր ոչ թոյլ տային
Ի զօրանալ քրիստոնէին
Եւ կորանալ այլասեռին:

Յետոյ այլ ոմն յազգէ նոցին
Ընկլէզ անուն երևելին,
Ազդմամբ հոգոյն գայր յօգնութիւն,
Նաւօք ելեալ Կիպրոս կղզին:

Տեսեալ զշար քարս նոցին,
Մատնեաց ի սուր զամենեսին.
ՅԱքայիու վերայ եկին,
Յուրախութիւն մեծ բանակին:

Տօն ցնծութեան կատարէին,
Զսուգն հին փարատէին
Եւ յետ անորց ինչ հանգստին
Վառեալ ի մարտ ընդ քաղաքին:

Զքառասուն հազար տաճիկն
Հանեալ արտաքս կոտորէին.
Յետ այսորիկ չու արարեալ,
Սալահադինն դիմեցին:

Տեսեալ զանթի զօրս տաճիկն,
Սակայն յուսոյն ոչ կասեցին,
Այլ յուսացան ի սէր փրկչին
Եւ յօգնութիւն սրբոյ խաչին:

Փոյթ ի վերայ յարձակէին
Եւ ուժգնակի խիստ բախէին,
Զբանակն յերկուս բաժանէին
Եւ զաջողակքն մաշէին:

ԶՍալահադինն փախուցին,
Մինչ յԱսիալանն հասուցին,
Զօրս ընդ ձեռամբ՝ կոտորեցին
Եւ զոր պրծեալ՝ կորացուցին:

Ուրախութեամբ դարձեալ անդրէն
Ի յԱրաբաթ ամ մի կացին
Եւ վասն առման սուրբ քաղաքին
Տեառնէ հրաման չեղև նոցին:

Վասն այնորիկ նստեալ անցին,
Փութով յաշխարհն իւրեանց գնացին,
Մինչև հրաման աստուածային
Տացէ զնա դարձեալ նոցին:

Այս խորհրդով կան և մնան
Նորա ելից ժամանակեան,
Մինչ յաստուծոյ առցեն հրաման
Եւ երամով գան միաբան:

Այլ թէ վասն է՞ր այս գործեցան,
Որ քրիստոնէայք նուազեցան,
Այս է պատճառն յայդ յանդիման
Ի սուրբ գրոց վկայել բան:

Թէ ոչ կամի անմահ արքայն
Զիր սիրելին՝ ամբարտաւան.
Յառակն ասաց սողոմոնեան.
«Ես եմ դիմակ այնպէս մարդկան»:

Վասն այսորիկ զքրիստոնէայն
Այլասեռիցն արար կոխան,
Զի հեզ բարութ ծառայական
Մուղ ինչ սգով աստէն ողբան,

Զի իրաւամբք արդարութեան
Անդէն առցեն զաստիս փոխան.
Ծոխ վայելել ուրախական,
Փայլեալ ի փառս անզուգական:

Եւ այլ պատճառ տեսանց ցասման,
Որ հրաւիրակ պատժոց գտան,
Ծուխն մեղաց մեր բազմութեան,
Որ ի բարձունս բարդեցան:

Ջի մեծ ոճիրք շարութեան
Ի մէջ հօտիս յոյժ բազմեցան,
Ջի հերձուածով բաժանեցան
Եւ իրերաց դահիճ դարձան:

Հայհոյութեամբ բացեալ բերան
Քրիստոնէի առ քրիստոնեայն,
Երով միմեանց յերկիր ելան
Եւ գերէվար սրբոց յարեան:

Այլև նախճիրս զանազան
Եւ անտակ վարս ստացան,
Վասն որոյ թիւք կատարեցան,
Կշռեցան և չափեցան,

Եհաս լրումն վերջական
Ըստ քանակի գործոց մարդկան,
Բայց ըստ կամացն աստուածական,
Ջոր նախ տեսաւ յարարչութեան,

Ի մինն Ադամ զորդիս մարդկան
Ի սկզբանէ մինչ ի վախճան,
Դեռ անկատար, ոչ ի լրման,
Թերի մնացեալ, նոր ի ծննդեան:

Ջոր ըստ մասին ոմանց մարդկան
Խիստ տերութեանցն արար վախճան,
Ջի չար կրիւք ծառայական
Տատանելով հեծեծական:

Եւ զկենցադոյս սէր նանրական
Փոխեն սէրն անանցական,
Զի երևի սիրոյն նշան,
Այլն գործոցն քարուքեան:

Իսկ աշխարհի որդիքս, որ կան,
Հողոյ ծնունդ եղեմական,
Ժառանգեցեն յայսմ յաիտեան
Եւ յապագայն խաւար մնան:

Յամենայնի, որ գործեցան
Փառս տացուք փրկչին մարդկան,
Հօր և հոգոյն իւր էական
Միասնական աստուածութեան: